ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

0010 Երևան Վ. Սարգսյան 3/8, հեռ. 594015
Էլ. փոստ՝ sirvard.gevorgyan@justice.am

N/10.2/46390-2022
«19» հոկտեմբերի 2022թ.

07625834
ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
N 2667
24 10 22

ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ ՊԱՐՈՆ ԱՐՍԵՆ ԱՂԱԲԱԲՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Աղաբաբյան,

Ի պատասխան Ձեր՝ 2022 թվականի հոկտեմբերի 6-ի թիվ Ե-01/2077 գրության՝ հայտնում եմ հետևյալը.

«Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» օրենքում (այսուհետ՝ Օրենք) փոփոխություններ և լրացումներ են կատարվել 2021 թվականի սեպտեմբերի 24-ին ընդունված ՀՕ-328-Ն օրենքի 7-րդ հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ Կողբ բնակավայրը ներառվել է Նոյեմբերյան համայնքի վարչական սահմաններում, իսկ 66-րդ հոդվածի համաձայն՝ ուժը կորցրած է ճանաչվել Օրենքի 18.32-րդ հոդվածը, որի համաձայն՝ Տավուշի մարզի Կողբ համայնքը համարվում էր առանձին վարչական սահմաններ ունեցող տարածք:

Վերոնշյալ փոփոխությունների արդյունքում՝ Կողբի գյուղապետարանը դադարել է գործել և թեև վերջինս հանդիսանում է «Մշկավանք» ՍՊԸ-ի (գրանցման համար՝ 81.110.00353, գրանցման ամսաթիվ՝ 09.10.2008թ., ՀՎՀՀ՝ 07404432) հիմնադիրն ու միակ մասնակիցը, դա հիմք չի հանդիսանում «Մշկավանք» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) գործունեության դադարեցման (լուծարման) համար: Այս առումով հարկ է նկատի ունենալ, որ Կողբի գյուղապետարանի գործունեության դադարումը պայմանավորված է համայնքների միավորմամբ: Հետևապես՝ Կողբ համայնքի այլևս գոյություն չունենալու պայմաններում՝ Ընկերության գործունեության և իրավահաջորդության վերաբերյալ հարցադրումները պետք է դիտարկել «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 102-րդ հոդվածի 4-րդ կետի

կարգավորումների համատեքստում, որոնց համաձայն՝ միավորվող համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններից հետո միավորվող համայնքները համարվում են վերակազմակերպված՝ որպես մեկ համայնք՝ Օրենքով սահմանված անվանմամբ և համայնքային կենտրոնով: Միավորված համայնքը հանդիսանում է միավորվող համայնքների **իրավահաջորդը**, իսկ միավորված համայնքի վարչական սահմանների ներքո գտնվող համայնքային սեփականություն համարվող գույքը փոխանցվում է միավորված համայնքին:

Ելնելով վերոգրյալից, հարկ է նշել, որ Տավուշի մարզի Կողբ համայնքը դադարել է գոյություն ունենալ որպես առանձին վարչական շրջան՝ ներառվելով Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնքի վարչական սահմաններում և նշված գործընթացին հաջորդել է Կողբի գյուղապետարանի գործունեության դադարեցումը, ինչը սակայն հիմք չի հանդիսանում Ընկերության գործունեությունը դադարեցնելու (լուծարելու) համար:

Միևնույն ժամանակ, հարկ է նշել, որ Ընկերության կանոնադրության 7.2-րդ կետի ուժով Ընկերության կառավարման բարձրագույն մարմինը **Ընկերության մասնակիցների** ընդհանուր ժողովն է, որն ունի Ընկերության կառավարման գործունեության ցանկացած հարցի վերջնական լուծման իրավունք: Քննարկվող դեպքում, առկա տեղեկատվության համաձայն՝ Ընկերության միակ մասնակիցը Կողբի գյուղապետարանն էր, իսկ վարչատարածքային փոփոխությունների արդյունքում Կողբ համայնքի իրավահաջորդը Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնքն է, որին էլ, ըստ էության, պատկանում է Ընկերության գործունեությունից բխող որոշումներ կայացնելու իրավասությունը:

10/20/2022

X

Sirvard Gevorgyan

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ Signed by: GEVORGYAN SIRVARD 6804830105

ՍԻՐՎԱՐԴ ԳԵՎՈՐԳՅԱՆ